Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2010թ. հոկտեմբերի 13-ին կայացած թիվ 2 նիստի արձանագրությունից

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ կառավարման խորհրդի անդամի ընտրություն:
2. 2009-10 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
3. Կրեդիտային համակարգի իրականացման գործընթացը ֆակուլտետում:
4. Ուսանողների՝ սեպտեմբեր ամսվա հաճախումների արդյունքների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

1. Լ Ս Ե Ց Ի Ն.- ԵՊՀ-ի կառավարման խորհրդի անդամի ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Լ. Եզեկյանը, Ս. Մուրադյանը, Վ. Գաբրիելյանը, Լ. Հովսեփյանը, Ռ. Սաքապետոյանը և Ն. Հարությունյանը:

Բոլոր ելույթ ունեցողները նշեցին, որ ԵՊՀ-ի կառավարման խորհրդի անդամի ամենահարմար թեկնածուն ֆակուլտետի դեկան, պրոֆ. Արծրուն Ավագյանն է: Խորհրդի մյուս անդամները ևս հավանություն տվեցին այդ թեկնածուի առաջադրմանը:

Առաջարկություն եղավ կատարել բաց քվեարկություն, որի արդյունքում հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Արծրուն Ավագյանը միաձայն ընտրվեց ԵՊՀ-ի կառավարման խորհրդի անդամ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.- ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետից ԵՊՀ-ի կառավարման խորհրդի անդամ ընտրել ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արծրուն Աբգարի Ավագյանին**:

2. Լ Ս Ե Ց Ի Ն.- Հայ բանասիրության ֆակուլտետում ուսանողությունից ԵՊՀ-ի կառավարման խորհրդի անդամի ընտրության անցկացման կարգի և ընտրված անձի հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Լ. Եզեկյանը, Ս. Մուրադյանը, Վ. Գաբրիելյանը, Լ. Հովսեփյանը, Ռ. Սաքապետոյանը, Ն. Հարությունյանը և ուսանող Խ. Հարությունյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողությունից ԵՊՀ-ի կառավարման խորհրդի անդամի ընտրությունն անցկացվել է խախտումով. ընտրությունները կատարվել են շատ ավելի վաղ, քան այդ մասին

ստացվել է ՀՀ ԳԿ նախարարի հրամանը: ԵՊՀ-ի ուսանողական խորհուրդի ընտրական հանձնաժողովը չի հրավիրել ֆակուլտետի պատվիրակների հավաք, քվեարկությունը կատարել է ֆակուլտետային ուս. խորհուրդը, որը դրա իրավունքը չունի, մանավանդ որ՝ առաջադրված թեկնածուին ընտրել է հին ուս. խորհուրդը: Բացի այդ՝ խորհրդի կազմում եղել են մարդիկ, ովքեր այդ պահին այլևս ավարտած են եղել համալսարանը և ֆակուլտետի հետ ոչ մի կապ չեն ունեցել: Հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողության անունից ԵՊՀ-ի կառավարման խորհրդի անդամ է ընտրվել 4-րդ կուրսի ուսանողուհի **Ժենյա Յայլոյանը,** ով ուսման ընթացքում քանիցս ստացել է անբավարար գնահատականներ, ով ընթացիկ քննության ժամանակ տոմս է գողացել և դեկանի կողմից ստացել է գրավոր նկատողություն: Ֆակուլտետի խորհրդի բոլոր անդամները պահանջեցին անվավեր հայտարարել այդ ուսանողուհու թեկնածությունը և հրավիրել ուսանողության կողմից կառավարման խորհրդի անդամի նոր ընտրություն:

Լրացուցիչ հայտնենք, որ ՈՒԽ կանոնադրությունը այնպես է կազմված, որ բոլոր կարգի ընտրվողները ընտրվում են ՈՒԽ նախագահության 5-6 անդամների կամքով, որը շատ հեռու է ժողովրդավարական նորմերից:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.- Հաշվի առնելով ԵՊՀ-ի ուսանողական խորհրդի կողմից կատարված խախտումը՝ անհամաձայնություն հայտնել ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողության կողմից ԵՊՀ-ի կառավարման խորհրդի անդամի թեկնածությանը և անցկացնել նոր ընտրություն:

2-րդ հարցի առիթով ելույթ ունեցավ դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Նա մասնավորապես նշեց, որ հիմնականում գոհացուցիչ են քննության արդյունքները, միջին վիճակագրությունը գրեթե նույնն է, չեն նկատվել արտառոց երևույթներ:

3-րդ հարցի առիթով ձայնը տրվեց մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ն. Հարությունյանին: Նա մասնավորապես նկատեց, որ կրեդիտային համակարգի իրականացման գործընթացը ֆակուլտետում անցնում է բարենպաստ պայմաններում: Պրոֆեսորադասախոսական անձնակազմը հիմնականում ըմբռնել է գործընթացի էությունը, և ֆակուլտետը գտնվում է գործընացն է՛լ ավելի կատարելագործելու ճանապարհին:

3-րդ հացի առիթով ելույթ ունեցավ դեկանի տեղակալ դոց. Վ. Եղիազարյանը: Նա նշեց, ամեն ինչ կազմակերպվում է դասերը բնականոն հունով ընթանալու համար:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

Լ Ս Ե Ց Ի Ն.- ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս Հասմիկ Ռազմիկի Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Լ. Հովսեփյանը, դոց. Ա. Աբրահամյանը:

Նշվեց, որ Հ. Հովհաննիսյանը 1989 թ. ավարտել է ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրական ֆակուլտետի անգլիական բանասիրության բաժինը և առ այսօր աշխատում է անգլիական բանասիրության ամբիոնում որպես դասախոս:

1993թ. դեկտեմբերին նա ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրան, նախ՝ առկա, ապա՝ 1994թ. մարտից՝ հեռակա ուսուցմամբ: Հանձնել է ասպիրանտական մինիմումներ գերմաներենից և փիլիսոփայությունից:

Երկու տարի ուսանել է Լոնդոնի համալսարանի հոգեբանության և լեզվական գիտությունների ֆակուլտետի մագիստրատուրայում, հանձնել է նաև անգլերենի քննություն՝ սահմանված ակադեմիական անգլերենի չափանիշներով: 2006թ. ստացել է մագիստրոսի աստճանի դիպլոմ՝ լեզվի տեսությունից: Հաճախել է Լոնդոնի համալսարանում անցկացվող սեմինարների, մասնավորապես՝ հնչույթաբանական խնդիրների շուրջ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.- Հաստատել Հասմիկ Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Վանկը որպես լեզվի չափական կառուցվածքի միավոր»՝ Ժ. 02.02 /ընդհանուր և կիրառական լեզվաբանություն/ մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել բ.գ.դ., պրոֆեսոր Լիանա Սամվելի Հովսեփյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ